ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 776 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 743-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ մասով, 21-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) դադարեցնել նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող՝ լիցենզավորման և ոչ ֆինանսական ոլորտի մեթոդաբանության վարչության գործունեությունը:

2. Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող՝ ծրագրերի գնահատման և ներքին աուդիտի քաղաքականության վարչությունն անվանափոխել ծրագրերի գնահատման, հանրային ներդրումների կառավարման և ներքին աուդիտի քաղաքականության վարչության:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 743-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) հավելվածի 10-րդ կետում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 13-րդ ենթակետը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13^2-րդ և 13^3-րդ ենթակետերով.

«13^2) հանրային ներդրումների արդյունավետության բարձրացումը.

13^3) պետություն-մասնավոր գործընկերության զարգացումը.».

2) հավելվածի 11-րդ կետում՝

ա. 6-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «զ» և «է» պարբերություններով.

«զ. տնտեսության զարգացման հանրային ներդրումային ծրագրերի առաջնահերթությունների որոշման գործընթացի համակարգումը, դրանց ընթացքի դիտանցման և արդյունքների գնահատման իրականացումը.

է. «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազոր մարմնին վերապահված՝ Պետություն-մասնավոր գործընկերության քաղաքականության մշակման աշխատանքների և ծրագրերի խթանման ու տարածման գործառույթների և այլ լիազորությունների իրականացում.»,

բ. ուժը կորցրած ճանաչել 11-րդ և 12-րդ ենթակետերը.

3) հավելվածի 32-րդ կետում՝

ա. ուժը կորցրած ճանաչել 21-րդ ենթակետը,

բ. 27-րդ կետում «Ծրագրերի գնահատման և ներքին աուդիտի քաղաքականության վարչություն» բառերը փոխարինել «ծրագրերի գնահատման, հանրային ներդրումների կառավարման և ներքին աուդիտի քաղաքականության վարչություն» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել վարչական գործերի հանձնումը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

04.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ